ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2024թ. սեպտեմբերի 23-ին, N 434- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 165-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 567-Ն որոշման և ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 1112-Ն որոշման պահանջները՝ որոշում եմ.

1. ՀՀ Արագածոտնի մարզպետի 2023 թվականի հունիսի 21-ի Ի N 165-Ա որոշմամբ հաստատված «Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Արագածոտնի մարզի «Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում իրականացնել սույն որոշմամբ հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

23.09.2024

X

VERIFIED OCSP 23.09.2024 12:06:19 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ